

ՀՀ ԿԳՄՄՆ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԻ
ՄԻՋՈՑՈՎ

Աշխատանքի դեկավար՝

Հասմիկ Բեյրության

Ուսուցիչ

Մելանյա Հակոբյան

ՄԱՐԶ

Գեղարքունիք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Ձորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմն.
դպր.

ՄԱՐՏՈՒՆԻ 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3
2. Գրական ակնարկ	4
2.1 Մտածողություն	4
2.2 Մտածողության անհատական առանձնահատկությունները	4
2.3 Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների մտածողության զարգացման գործում	8
3.3 Հետազոտական- փորձարարական դաս	11
3.1 Խմբի նկարագիրը	11
Փորձարարական դաս-1	11
Փորձարարական դաս 2	15
Եզրակացություն	19
Գրականության ցանկ	20
Հավելված	21

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրահայտ է, որ մտածողությունն իր նյութը ստանում է զգայություններից: Բայց մարդու մտածական գործունեության համար էական է ոչ միայն զգայական իմացության, այլև լեզվի, խոսքի հետ ունեցած փոխադարձ կապը : Միայն լեզվի միջոցով է հնարավոր դառնում իմացվող օբյեկտից այս կամ այն հատկանիշը վերացարկելը և հատուկ բառով նրա մտապատկերը կամ հասկացությունը ամրապնդելը: Որքան ավելի խորը և հիմնավորապես է կշռադատված այս կամ այն միտքը, այնքան ավելի հստակորեն և պարզ է այն ատահայտվում բառերով, բանավոր և գրավոր խոսքում: Եվ ընդհակառակը, որքան ավելի է կատարելագործվում որևէ մտքի բառային ձևակերպումը, այնքան ավելի հստակ և հասկանալի է դառնում նաև ինքը՝ միտքը: Ուստի և՛ մարդկային մտածողությունը անխզելիորեն կապված է լեզվի խոսքի հետ: Մտածողության և լեզվի օրգանական, անխզելի կապը հստակորեն ի հայտ է բերում մարդկային մտածողության, սոցիալական, հասարակական-պատմական բնույթը: Մտածողության զարգացման համար շատ հաճախ են օգտագործում մաթեմատիկան, այն գործողություններ կատարելու, հիշելու, մտապահելու և ուշադրությունը կենտրոնացնելու հզոր միջոց է:

Հետազոտական աշխատանքի **նպատակը**՝ աշխատանքում կուսումնասիրենք մտածողություն և խաղի դերը կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության մեջ, պարզելու համար խաղի օգտագործումը որպես ուսումնական մեթոդ որքանով է արդյունավետ, և ինչ հաճախականությամբ պետք է խաղը լինի ուսուցման գործընթացում:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2.1. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բառի մեջ միտքը այնպիսի անհրաժեշտ նյութական թաղանթ է ձեռք բերում, որի միջոցով միայն նա այլ մարդկանց և հենց մեզ համար անմիջական իրականություն է դառնում: Մարդկային մտածողությունը , ինչպիսի ձևով էլ այն իրագործվելիս լինի , անհնար է առանց լեզվի: Յուրաքանչյուր միտք ծագում և զարգանում է խոսքի հետ անխզելի կապի մեջ: Հոգեբանական գիտափորձերի ժամանակ կատարված հատուկ դիտումները ցույց են տալիս, որ որոշ դպրոցականներ և նույնիսկ հասուն մարդիկ հաճախ դժվարանում են խնդիրը լուծել, քանի դեռ իրենք իրենց մտքերը չեն ձևակերպել բարձրաձայն խոսքի միջոցով: Մեփական խորհրդածությունները ուրիշների համար բարձրաձայն ձևակերպելով, մարդը դրանք ձևակերպում է միաժամանակ իր համար: Մտքի այդպիսի ձևակերպումը, ամրապնդումը, նշանակում է ամբողջական մտքի վերլուծում իր բաղկացուցիչ մասերի: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում ավելի ծավալուն, հետևողական և սիստեմատիկ դատողությունը: Այսպիսով բառը, մտքի ձևակերպումը իրենց մեջ պարունակում են կշռադատող, տրամաբանական մտածողության կարևորագույն նախադրյալները:

Իմացությունը ենթադրում է մարդկային պատմության ընթացքում ձեռք բերած գիտելիքների ժառանգում: Գիտելիքների այդ պատմական ժառանգությունը հնարավոր է միայն նրանց արձանագրման, ամրապնդման, պահպանման և մի սերնդից մյուսին, մեկ մարդուց մյուս մարդուն փոխանցելու դեպքում: Մարդու մտավոր զարգացումը անհրաժեշտաբար իրագործվում է հասարակական-պատմական զարգացման ընթացքում մարդկության ստեղծած գիտելիքների յուրացման պրոցեսում:

2. 2 Մտածողության անհատական առանձնահատկությունները

Մարդկային մտածողությունն ունի ընդհանուր հատկություններ, մեխանիզմներ և օրենքներ: Բայց յուրաքանչյուր անհատ ունի իր զարգացման, սոցիալականացման ուրույն ընթացքն ու անհատականությունը: Մտածողության մի շարք հատկանիշներ ևս տարբեր անձանց մեջ զարգացման տարբեր աստիճանների են հասնում, տարբեր անհատական դրսևորումներ են ստանում: Ահա թե ինչու

մտածողության հետ մեր ծանոթությունը ամբողջական չէր լինի, եթե չանդրադառնայինք նաև նրա անհատական առանձնահատկություններին ու ոճերին: Մտածողության յուրահատկությունների առումով երեխաները կարող են տարբերվել ըստ իրենց ինքնուրույնության, ճկունության, մտքի արագության, խորության ու լայնության:

Մտքի ճկունությունը այն առանձնահատկությունն է, որը թույլ է տալիս հաշվի առնել իրադրությունների փոփոխությունները և փոխել գործողությունների սկզբնական պլանը, նոր մեկնաբանություններ տալ իրադրություններին և իրադարձություններին: Մտքի ճկունությունը անձի հարմարվողականության կարևոր նախադրյալներից մեկն է: Ինչպես տեսնում ենք, ճկուն մտածողությունը թույլ է տալիս ծայրահեղորեն անսպասելի ու ծանր ֆրուստրացնող իրադրության մեջ գտնել լավագույն լուծումներ, կտրուկ կերպով փոխել գործողությունների ծրագիրն ու իմաստավորումը:

Մտքի ինքնուրույնությունը երեխային թույլ է տալիս առանց կողմնակի ազդեցությունների ենթարկվելու և առանց հուշումների ըմբռնել պրոբլեմային իրադրությունների առկայությունը և ինքնուրույնաբար լուծումներ, վարքի անհրաժեշտ ձևեր գտնել: Ինքնուրույն մտածողություն ունեցողի աշխարհընկալումը մեծ մասամբ նաև պրոբլեմային է. նա զգայուն է չլուծված խնդիրների, անորոշությունների նկատմամբ: Այնտեղ, որտեղ ուրիշների համար ամեն ինչ «ինքնին հասկանալի է», ինքնուրույն մտածողություն ունեցողը տեսնում է խնդիրներ, հասկանում է, որ երևույթները պարզ ու ակնհայտ են թվում միայն այն պատճառով, որ անուններ են ստացել և սովորական են դարձել: Մտքի ինքնուրույնության դրսևորման տպավորիչ օրինակ է Գ. Մենդելի կողմից ժառանգականության օրենքների ուսումնասիրությունն ու հայտնագործումը: Մտքի ինքնուրույնությունն ու աշխարհի պրոբլեմային ընկալումը հատուկ են տաղանդավոր մարդկանց և երեխաների զգալի մասին, որոնք բազմաթիվ հարցեր են տալիս իրենց տեսածի ու լսածի մասին:

Մտքի արագությունը: Մտածողությունը, որպես խնդրի լուծման գործընթաց, կարող է ընթանալ արագ կամ դանդաղ: Կան արագ և դանդաղ մտածող երեխաներ: Այս երևույթի հետ հաճախ են գործ ունենում մանկավարժներն ու կոլեկտիվների ղեկավարները: Մտքի արագությունը պայմանավորված է նյարդային համակարգի ժառանգական առանձնահատկություններով, խառնվածքով, ինչպես նաև մտածական

գործընթացի հաջող ընթացքի համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների առկայությամբ: Բայց երեխայի մտածական գործընթացը կարող է սովորականից ավելի արագ կամ դանդաղ դառնալ նաև հուզական վիճակների, տրամադրությունների և ներքին ու արտաքին դրդապատճառների և ազդակների ներգործության տակ: Օրինակ, սովորական ու ապահով պայմաններում երեխան կարող է մտածել արագ ու արդյունավետ, մինչդեռ ֆրուստրացիայի ու սթրեսի պայմաններում կարող է կաշկանդվել ու խիստ դանդաղ մտածել:

Մտքի խորությունը ուսումնասիրվող երեւոյթների էական հատկություններն ու պատճառական կապերը բացահայտելու ընդունակությունն է: Հակառակ որակը մտքի մակերեսայնությունն է:

Մակերեսային մտածողություն ունեցող մերեխան առավելապես նկարագրում է երևույթները, այլ ոչ թե բացատրում. ցույց է տալիս արտաքին կապերը, որոնք մատչելի են անմիջական ընկալման համար: Մտքի խորությունը, որպես պատճառական բացատրություններ որոնելու հակում, դիտվում է արդեն վաղ մանկության և նախադպրոցական տարիքներում: Տպավորիչ է հետևյալ վկայությունը. հինգ տարեկան Ա.Էյնշտեյնին.ցույց են տալիս կողմնացույց: Նայելով շարժվող սլաքին, փոքրիկն ասում է. «Ես կարծում եմ, որ սրա հետևում ինչ-որ բան կա»: Երեւոյթների մակերեսից այն կողմ թափանցելու հակումը մտքի խորության դրսևորում է և հատուկ է մեծ մտածողներին, բնության օրենքներ հայտնագործողներին: Խոսում են նաև մարդու մտքի լայնության մասին, որը թերևս պետք է հասկանալ երկու իմաստով: Առաջինն այն է, որ լայն մտածողություն ունեցող մարդը որևէ երևույթ կամ պրոբլեմ ուսումնասիրելիս կարողանում է իր գիտակցական-ենթագիտակցական տիրույթում միաժամանակ ընդգրկել ու միավորել նրա բազմազան առանձնահատկություններն ու այլ երևույթների հետ ունեցած կապերը: Դա մտքի **համադրողականությունն** է (սինթեզելու ընդունակություն): Երկրորդ իմաստն այն է, որ լայն մտածողություն ունեցողը հակված է ընդարձակ իմացության, Նեղ մտածողություն ունեցող երեխաները սահմանափակվում են գիտելիքների որոշակի, նեղ բնագավառներով և. որպես կանոն, ստեղծագործողներ չեն, ի վիճակի չեն գտնելու երևույթները կառավարող ընդհանուր օրենքները:

Մտածողության անհատական ոճերը

Մարդկանց մտածողության անհատական տարբերությունների մասին լրիվ պատկերացում չէինք ունենա, եթե չանդրադառնայինք նաև մտածողության կամ, ավելի լայն՝ իմացական ոճերի հարցին:

Թեև բոլոր մարդկանց մտածողությունը ենթարկվում է մի շարք ընդհանուր օրինաչափությունների, այնուամենայնիվ, ինչպես և բազմաթիվ այլ տեսակետներից, կան մտածողության ոճերի մի շարք անհատական տարբերություններ: Որոշ կայուն ու կրկնվող տարբերություններ բնութագրվում են որպես մտածողության անհատական ոճեր: Դրանք վերաբերում են մտածողության որոշակի տեսակից, որոշակի մտածական գործառնություններից և խնդիրների լուծման եղանակներից առավելապես օգտվելուն:

Մտածողության անհատական ոճերի հարցը հետաքրքրել է դեռևս անգլիացի հայտնի գիտնական Ֆ.Գալտոնին: Նրան հետաքրքրել էր այն, թե մտածելիս երեխաներն ինչպես են օգտագործում մտապատկերներ առաջ բերելու իրենց ընդունակությունը և ինչ տեսակի մտապատկերներ են օգտագործում: Այդ հարցը պարզելու համար նա հարցաթերթիկներ ուղարկեց ժամանակի հայտնի գիտնականներին ու մտածողներին: Նա, ի թիվս այլ բաների, հարցնում էր նաև, թե ինչ չափով պայծառ ու կենդանի են այն մտապատկերները, որ նրանք ունենում են, երբ փորձում են վերհիշել իրենց առավոտյան նախաճաշի սեղանն իր ողջ պարունակությամբ:

Մտացված պատասխանները վերլուծելով նա հայտնաբերեց մտածողության մի շարք ոճեր: Հարցման ենթարկվածներից շատերը մինչ այդ բոլորովին չէին մտածել իրենց մտքերի զգայական առանձնահատկությունների մասին և շատ զարմացած էին, որ բոլոր մարդիկ չէ, որ նույն պատկերներն են օգտագործում, ինչ և իրենք: Ֆ.Գալտոնի հիմնական հայտնագործությունն այն էր, որ ոմանք մտածելիս հիմնականում օգտագործում են տեսողական մտապատկերներ, մյուսները՝ լսողական, երրորդները՝ կինեսթետիկ և այլն: Սրանք էլ հենց մտածողության անհատական ոճերն են, որոնցով երեխաներին կարելի է տարբերել իրարից: Տարբեր ոճեր ունեցող անձինք նույն իրադրությանը տարբեր պատասխաններ են տալիս, տարբեր վարք են դրսևորում, տարբեր կերպ են վերարտադրում նախկինում ընկալված գիտելիքները:

2.3 ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐՈՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱ- ԿԱՆՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում նորույթ չէ: Խաղի մեթոդաբանական հիմքերի, սոցիալական բնույթի և սովորողի զարգացման գործում դրա ունեցած դերի ու այլ հարցերի մշակմամբ ժամանակակից մանկավարժության մեջ զբաղվել են Լ. Վիգոտսկին, Ա. Ն. Լեոնտևը, Դ. Բ. Էլկենինը և այլք:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունն ու անհատականությունն առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղը երեխայի համար կենսաբանական ներքին պահանջմունք է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նախ խաղային իրավիճակներում: Խաղին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում: Ըստ հոգեբանների՝ այդ տարիքն է առանձնանում որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան, և զարգացման հենց այդ շրջափուլի գործունեության հիմնական տեսակը, ուսուցման հետ զուգահեռ, շարունակում է մնալ խաղը: Այդ տարիքում խաղն անձի ձևավորման կարևորագույն միջոց և գործոն է: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում խաղի դերին և ուսուցմանը խաղի միջոցով: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում նպաստում է աշակերտների ակտիվացմանը և մարմնաշարժողական, և իմացական առումներով: Ակտիվությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Խաղի մուտքը կենդանի մանկավարժական գործընթացներ դասարանում ստեղծում է նոր, յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ –աշակերտ և աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում մինչ այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա խաղի շնորհիվ դրանք աստիճանաբար անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը՝ աննկատելիորեն ընդգրկելով ակտիվ ուսուցման մեջ:

Խաղը հանդիսանում է հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց:

Վ. Ս. Կուկուշինը ներկայացնում է խաղային տեխնոլոգիայի առավել կարևոր հետևյալ գործառույթները.

- **Սոցիալ-մշակութային նշանակությունը:** Խաղը երեխայի սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է: Այն իր մեջ ներառում է սոցիալ-վերահսկող գործընթացներ: Խաղի սեցիալ-մշակութային նշանակությունը ենթադրում է մարդու կողմից մշակույթի յուրացման, անձի ձևավորման ու դաստիարակման միջոց և թույլ տալիս նրան գործել որպես կոլեկտիվի լիարժեք անդամ: Խաղի սոցիալ-մշակութային բնույթն այն դարձնում է ուսուցման անփոխարինելի տարր:

- **Խաղի ինքնիրացման գործառույթը:** Սա խաղի հիմնական գործառույթներից մեկն է: Խաղը կարևոր է որպես անձի ինքնիրացման ոլորտ: Հենց այս տեսակետից առավել էական նշանակություն ունի խաղի գործընթացը և ոչ թե դրա արդյունքը, մրցակցությունը կամ որևէ նպատակի հասնելը:

- **Հաղորդակցման գործառույթը:** Խաղը հաղորդակցական գործունեություն է՝ կոնկրետ խաղային կանոններով: Այն մարդուն ներգրավում է իրական մարդկային բարդ հարաբերությունների համակարգի մեջ:

- **Խաղի ախտորոշիչ գործառույթը:** Խաղն ավելի ախտորոշիչ է, քան մարդու որևէ այլ գործունեության տեսակ: Այն յուրահատուկ <<ինքնարտահայտման միջոց է>>, որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված ներուժը:

- **Խաղի թերապևտիկ գործառույթը:** Խաղը կարելի է օգտագործել տարբեր դժվարություններ հաղթահարելու նպատակով: Գնահատելով խաղային գործելակերպի թերապևտիկ նշանակությունը՝ Դ. Բ. Էլկոնինը գրել է, որ խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է նոր սոցիալական հարաբերությունների հաստատմամբ, որոնց մեջ երեխան մտնում է դերային խաղում:

- **Խաղի շտկողական գործառույթը:** Խաղի միջոցով հոգեբանական շտկումն ընթանում է բնական ձևով, եթե բոլոր մասնակիցները յուրացրել են խաղի կանոններն ու սյուժեն, և յուրաքանչյուր մասնակից լավ գիտի ոչ միայն իր, այլև խաղընկերների դերերը, ապա խաղի ընթացքը և նպատակը նրանց համախմբում է: Շտկողական խաղերը կարող են օգնել շեղված վարքով աշակերտներին՝ հաղթահարելու այն ապրումներն, որոնք խոչնդոտում են նրանց ներդաշնակ ինքնազգացողության կայացմանը և

շփմանը հասակակիցների միջավայրում:

-Խաղի զվարճացնող գործառույթը: Զվարճանքի ապրումը ծնվում է սովորականից տարբերվող, անկեղծ ուրախության շեշտադրումներով զանազանվող իրավիճակներում: Եվ դրան ինքնաբերաբար ձգտում են բոլորը: Խաղի զվարճացնող գործառույթն առնչվում է որոշակի հարմարավետության ու հաճելի միջավայրի ստեղծմանը: Խաղի զվարճանքը որոնումն է: Խաղը մոգական ուժ ունի: Այն ընդունակ է սնել երևակայությունը:

Այսպիսով խաղը հսկայական դերակատարում ունի մանկավարժական գործընթացում: Այն նպատակային և ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է հասնել բարձր արդյունքների:

Տարբեր տեսանկյուններից քննարկելով խաղային գործունեությունը՝ գիտնականները նշում են, որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է: Նրանք խաղը դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևորագույն միջոց: Խաղի՝ միջոցով երեխային կարելի է կրթել և դաստիարակել: Խաղի ժամանակ խիստ գործում են երեխայի միտքն ու երևակայությունը:

Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

Խաղի մեջ կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքին խաղի, այլ պարզապես խաղը տարածել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ և խաղի միջոցով:

-
1. *Кукушин В.С., Болдырева-Вараксина А.В.* – “ Педагогика начального образования” М.: 2005. – 295-296с.

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ – ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ

3.1 ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Իմ հետազոտական աշխատանքը իրականացրել եմ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմնական դպրոցի 3-րդ դասարանում: Քանի որ այդ դասարանում սովորողները թվով շատ են, ունեն տարբեր առաջադիմություն և մտածողություն, այդ նպատակով ցանակցել եմ օգնել թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին:

Այդ դասարանում սովորում է 32 աշակերտ, որից 15-ը դջիկ է, 17-ը տղա: Սովորողների մեծ մասը շուտ է ըմբռնում ուսուցչի հանձնարարությունը, իսկ մի քանիսը ետ են մնում ընդունակ աշակերտերից: Կրթության մեջ հաշվի առնելով տարբերակված ուսուցման առանձնահատկությունները փորձել եմ հետազոտական դասը ավելի շատ իրականացնել խաղային մեթոդների կիրառմամբ: Այն աշակերտները որոնք ետ են մնում իրենց տեղերը փոխեցին, և նստեցին բարձր առաջադիմություն ունեցող սովորողների կողքին:

3.2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ-1

[«Բազմանիշ թվի բազմապատկումը միանիշ թվով»](#)

Դ Ա Ս Ի Ը Ն Թ Ա Յ Ք Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Դասը սկսում ենք վերհիշելով բազմապատկման աղյուսակը, հաշվի առնելով, որ դասարանը մեծաքանակ է և սովորում են այնտեղ տարբեր կարողությունների տեր աշակերտներ, հարցադրումներին դա հաշվի էի առնում:

Դասը սկսել ենք վերհիշելով բազմապատկման աղյուսակը, <<ՊՈՊ ԿՈՌՆ>> հարց ու պատասխանի մեթոդով:



Քանի որ, հետազոտական դասերը իրենց բովանդակությամբ նման էին՝ բազմապատկում և բաժանում, մենք աշխատել ենք նույն սկզբունքով՝ խաղային մոտեցմամբ ենք անցել նոր թեմաները:

Նոր թեմայի հատորդում

Բազմանիշ թվի բազմապատկումը միանիշ թվով

Ինչպե՞ս բազմապատկել բազմանիշ թիվը միանիշ թվով: Վերհիշում ենք որոնք են կոչվում բազմանիշ թվեր, որոնք միանիշ:

Դասը բացատրում եմ ըստ կանոնի

Բազմանիշ թիվը միանիշ թվով բազմապատկելիս կարելի է բազմանիշ թվի կարգային գումարելիներինց յուրաքանչյուրը բազմապատկել միանիշ թվով և արդյունքները գումարել:

Օրինակ

Հաշվենք $378 \cdot 5$ եռանիշ և միանիշ թվերի արտադրյալը:

1) 378 թիվը ներկայացնենք կարգային գումարելիների գումարի տեսքով՝ $546 = 300 + 70 + 8$

2) Կարգային գումարելիներից յուրաքանչյուրը բազմապատկենք 5 -ով՝

$300 \cdot 5 = 1500$

$$70 \cdot 5 = 350$$

$$8 \cdot 5 = 40$$

3) Գումարենք ստացված թվերը՝ $1500 + 350 + 40 = 1850 + 40 = 1890$

Պատասխան՝ $378 \cdot 5 = 1890$

Հաշվենք $4218 \cdot 5$ քառանիշ և միանիշ թվերի արտադրյալը:

1) 4218 թիվը ներկայացնենք կարգային գումարելիների գումարի տեսքով՝ $4218 = 4000 + 200 + 10 + 8$

2) Կարգային գումարելիներից յուրաքանչյուրը բազմապատկենք 5-ով՝

$$4000 \cdot 5 = 20000$$

$$200 \cdot 5 = 1000$$

$$10 \cdot 5 = 50$$

$$8 \cdot 5 = 40$$

3) Գումարենք ստացված թվերը՝ $20000 + 1000 + 50 + 40 = 21000 + 90 = 21090$

Պատասխան՝ $4218 \cdot 5 = 21090$

Այնուհետև սկսեցինք կատարել դասագրքի վարժություններից, իմ աշխատանքային տարիների փորձից ելնելով դասարանում մենք աշխատում ենք ավելի դժվար վարժություններով, իսկ պարզերը թողնում տնային աշխատանք կամ վարժության կեսը կատարում ենք դասարանում (օրինակ՝ Վարժություն 630 ա. կատարել ենք դասարանում, իսկ բ. հանձնարարվել է տնային աշխատանք), մի հատվածը տնային աշխատանք, թեման ամրապնդելու համար:

Դասի ընթացքում իրականացրել ենք հետաքրքիր խաղային վարժանք, յուրաքանչյուր շաբթի սկզբի սովորողին հանձնարարվում է գրել միանիշ թվերի բազմապատկում օրինակ՝ $2 \cdot 2$, որից հետո հաջորդ սովորողը պետք է հաշվի ստացված թիվը բազմապատկի նախորդի արտադրիչով: Այնքան ենք անում մինչև

շարքը ավարտի: Թվերը սկզբում 3 շարքին էլ նույն ենք տալիս ստուգելու թե, ոչ շարքն է ճիշտ կատարել և առաջինը վերջացրել:

Քանի որ այս թեմային տրված է ուսումնական պլանով 2 դասաժամ, մենք առաջին դասաժամին սովորել ենք կարգային գումարելիների տեսքով կատարել բազմանիշ թվի բազմապատկումը միանիշ թվով, իսկ երկրորդ ժամին աշակերտներին բացատրեցի սյունակաձև բազմապատկումը հետևյալ կերպ՝ կատարենք $432 \cdot 2$ եռանիշ և միանիշ թվերի բազմապատկումը սյունակով: Վերևի տողում գրում ենք մեծ թիվը՝ եռանիշը, իսկ ներքևում՝ փոքրը՝ միանիշը: Միանիշ թիվը գրում ենք եռանիշ թվի միավորների թվանշանի տակ:

		4	3	2
	*			2
				4
			6	0
		8	0	0
		8	6	4

432

× 2

4

60

800

864

Վերևի բազմապատկման ժամանակ կատարեցինք հետևյալ քայլերը:

ա. 432 թիվը ներկայացրեցինք կարգային գումարելիների գումարի տեսքով՝ $432=400+30+2$:

բ. ապա 2 միանիշ թիվը հերթով բազմապատկեցինք գումարելիներից յուրաքանչյուրով

գ. վերջում գումարեցինք ստացված արդյունքները

Կարճ նկարագրվածը գրում ենք այսպես՝

$$432 \times 2 = 864$$

1. Սկզբում 2 -ը բազմապատկում ենք եռանիշ թվի միավորների թվանշանով՝ 2 -ով: Արդյունքը՝ 4 -ը գրում ենք գծի տակ՝ միավորների թվանշանի տակ:

2. Ապա 2 -ը բազմապատկում ենք եռանիշ թվի տասնավորների թվանշանով՝ 3 -ով: Արդյունքը՝ 6 -ը գրում ենք գծի տակ՝ տասնավորների թվանշանի տակ:

3. Հետո 2-ը բազմապատկում ենք եռանիշ թվի հարյուրավորների թվանշանով՝ 4-ով Արդյունքը՝ 8-ը գրում ենք գծի տակ՝ հարյուրավորների թվանշանի տակ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2:

Մաթեմատիկա «Մակերես»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ – ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ինչպես արդեն նշվեց դասարանը մեծաքանակ է, որը հնարավորություն է տալիս ուսումնական գործունեության ընթացքում կատարել տարբերակված ուսուցումը խմբային աշխատանքի միջոցով: Այդ մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ խմբի անդամները ունեն գիտելիքի տարբեր մակարդակներ, և հանձնարարությունը կատարելիս միմյանց շատ են օգնում:

Նախապես դասասենյակի կահույքը դասավորել էինք այնպես, որ հարմար լինի խմբային աշխատանք կատարելուն:

Յուրաքանչյուր խմբին տալի եմ արտահայտությունը հաշվելու օրինակ, որը լուծելու համար ունեին 2 րեպե ժամանակ

Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացրեցին թե ինչպես են հաշվել: Մինչ սովորողները կգրեին վարժությունը, ես գրատախտակին ամրացրեցի տարբեր թվեր, որոնք այդ արտահայտությունների ճիշտ պատասխաններն էին: Յուրաքանչյուր խմբից մի հոգի գալիս է և վերցնում այն համապատասխան քարտը, որը վարժությունը կատարելուց հետո ստացել են՝ օրինակ.

32x40+168x40	17x600-16x6043x500-42x500	65x100-50x10
62x40+538x40	48x15+52x1	25x15-25x5

Հարմար եղանակով հաշվողները ստանում են մրցանակային մի խաղանիշ: Միալ պատասխանողները փորձում են գտնել իրենց սխալը և շտկել: Աշխատանքը կատարելու համար ավելացնում են ժամանակը ևս մեկ րոպե, հաջողելու դեպքում ստանում էին քաղաքարտ: Արդյունքում բոլոր խմբերի մոտ լինում է խաղաքարտ, որի հետևում որևէ տառ է: Խաղաքարտի տառերը գրելով գրատախտակին, հանձնարարվում է սովորողներին գտնել խառնված տառերի բառը, որը պետք է կատարեին մեկ րոպեում: Գուշակող խումբը ստանում է խաղանիշ, իսկ բառը ՄԱԿԵՐԵՍ, բառը գրում են գրատախտակին: Այնուհետև առաջարկում են սովորողներին ասել, թե ինչ են հասկանում երբ լսում են մակերես բառը: Բոլոր մտքերը գրեցի գրատախտակին, որից հետո սկսեցի բացատրել նոր դասը:

Նոր նյութի ուսումնասիրում.

Առաջադրեցի հետևյալ հարցը.

-Ո՞վ գլխի ընկավ այսօրվա դասի թեման:

-Այսօր ծանոթանալու ենք մակերես հասկացությանը և չափելու ենք մեզ ծանոթ երկրաչափական պատկերներից քառակուսու և ուղղանկյան մակերեսները:

Սկսեցի դասը բացատրել.

Ինչպե՞ս հաշվել ուղղանկյան մակերեսը:

Կանոնն այսպիսին է.

***Ուղղանկյան մակերեսը հավասար է
լայնության և երկարության արտադրյալին:***

Հաշվենք, օրինակ, այս ուղղանկյան մակերեսը (ցանցի քառակուսիներից յուրաքանչյուրի կողմը 1 սմ է):

1սմ			

2սմ լայնություն

4 սմ՝ երկարություն


Ուղղանկյունը կազմված է 8 քառակուսիներից, որոնցից յուրաքանչյուրի մակերեսը 1 սմ² է, հետևաբար, ուղղանկյան մակերեսը 8 սմ² է:

Նույն թիվը ստանում ենք նաև ըստ կանոնի: Իրոք, քանի որ ուղղանկյան կողմերի երկարությունները 2 սմ և 4 սմ են, ապա, ըստ կանոնի, մակերեսը կլինի՝ $2 \cdot 4 = 8$ սմ²:

Յուրաքանչյուր խմբի տալիս եմ տեխնոլոգիայի դասին իրենց պատրաստած երկրաչափական պատկերների հավաքածուն՝ եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն: Բոլոր պատկերները հակառակ կողմից տրոհված են 1սմ կողմ ունեցող քառակուսիների: Խմբերին առաջարկում եմ պատկերները դասավորել ըստ մեծության: Աշխատանքի կատարման համար տրամադրել եմ 2 բոլոր: Ամեն խումբ ներկայացրեց իրենց աշխատանքը, և բացատրեց թե ինչպես են կատարել համեմատումը: Հավաքածուներում կային այնպիսի պատկերներ, որոնք հնարավոր չէր համեմատել վերադրման միջոցով: Համեմատում ենք պատկերների հետնամասում եղած քառակուսիների քանակով:

Վերադրում՝

Համեմատենք հետևյալ պատկերների մակերեսները:



Այս պատկերների մակերեսները համեմատելու համար կարելի է հաշվել, թե քանի՞ փոքրիկ քառակուսիներից է կազմված պատկերներից յուրաքանչյուրը և համեմատել ստացված թվերը:

Առաջին պատկերը կազմված է 6 քառակուսիներից, իսկ երկրորդ պատկերը

կազմված է 9 քառակուսիներից:

Հետևաբար, առաջին պատկերի մակերեսը փոքր է երկրորդ պատկերի մակերեսից:
Համեմատման համար հաշվում ենք քառակուսիների թիվը, որքան շատ եղավ,
այնքան պատկերի մակերեսը մեծ է

Պատկերների գունավորված մասը համարվում է պատկերի մակերեսը, որը հաշվելու
համար պատկերը բաժանեցինք քառակուսիների և հաշվեցինք դրանց քանակը:

Խմբերին առաջարկեցի առանձնացնել քառակուսի և ուղղանկյուն երկրաչափական
պատկերները, որից հետո պետք է բազմապատկում գործողության միջոցով հաշվեին
մակերեսը:

Նոր նյութի ընկալումը

Խմբերին առաջարկեցի որոշեն մակերեսները հաշվելու մեկ այլ տարբերակ, առանց
պատկերը հավասար քառակուսիների բաժանելու: Աշակերտները ոչ միանգամից,
բայց առաջարկեցին երկարության և լայնության արտադրյալի կանոնը:

Այդ ամենը ուղղանկյան օրինակով կատարեցինք 657 վարժության առաջին խնդիրը:

Նոր նյութի ամրապնդման համար խմբերին բաժանեցի Ա3 չափի թղթեր, որի վրա
արդեն գրված էր խնդիր հաշվել պարագիծը և մակերեսը:

Դասը ամփոփեցի հարցերով.

- ✓ Ո՞ր հասկացությանը ծանոթացանք այսօր:
- ✓ Չափում թե՞ հաշվում են մակերեսը:
- ✓ Մակերեսի որ՞ միավորի հետ ծանոթացանք:
- ✓ Որ պատկերների մակերեսները հաշվելու մակերեսի հետ ծանոթացանք:
- ✓ Ինչպե՞ս են հաշվում ուղղանկյան, քառակուսու մակերեսը:
- ✓ Բացատրե՛ք պարագծի և մակերեսի տարբերությունը:
- ✓ Ի՞նչ է իրենից ներկայացնում քառակուսի սանտիմետրը:

Ամփոփել խմբերի վաստակած միավորները և գնահատել:

Տնային աշխատանքի հանձնարարություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ կրտսեր դպրոցական հասակում սովորողների համար որքան էլ առաջնային գործունեություն դառնում է ուսումը, այնուամենայնիվ խաղը ևս մնում է որպես առաջնային գործունեություն, և շատ հաճախ ուսումնական նյութը ավելի հեշտ և դյուրին ընկալելու համար մենք մանկավարժներս դասը խաղի ենք վերածում: Փորձարարական-հետազոտական դասերը ուղղված էին այդ նպատակին: Մաթեմատիկայի նախապես պլանավորած դասի ժամանակ մենք օգտագործեցինք մի շարք մեթոդներ, որոնք օգնեցին թեման ավելի հեշտ հասկանան սովորողները: Մաթեմատիկան օգնում է զարգացնել տրամաբանական մտածողությունը: Այս աշխատանքում մենք ուսումնասիրեցինք ներդասարանական պայմաններում համագործակցային մեթոդի կիրառումը՝ զարգացնելու սովորողների անհատական մտածողությունը խնդիրների լուծման ժամանակ, և հանգեցինք այն եզրահանգմանը, որ մարդկային ուղեղը գործում է որպես մեկ-միասնական համակարգ, որում հոգեկան ակտիվության մակարդակները գտնվում են սերտ փոխներգործության մեջ: Մտածողության գործընթացում տրամաբանական կառույցների և ենթագիտակցական դիրքորոշումների միջև գործում է դիալեկտիկական միասնության և հակասականության օրենքը, որպես խնդրի լուծման գործընթաց մտածողությունը ներկայացնում է խստիվ տրամաբանական, վերլուծական-համադրական գործունեություն, որտեղ մտային գործառնությունների շղթայի յուրաքանչյուր օղակ օրինաչափորեն բխում է նախորդներից և հիմք հանդիսանում հաջորդ դասողությունների համար: Սովորողների մտածողության զարգացումը միևնույն ուսումնական ծրագրի իրականացման ժամանակ կարևոր է, իսկ կրտսեր դպրոցականների հետ այդ ամենը արդյունավետ է լինում, երբ ուսումնական գործընթացում օգտագործում ենք խաղեր, որոնց ժամանակ սովորողը և՛ լիցքաթափվում է, և՛ նոր նյութ սովորում:

Հետազոտության նպատակը ուսումնասիրեցինք և ևս մեկ անգամ ապացուցեցինք, որ համագործակցային մեթոդները՝ ուսուցիչ – աշակերտ, աշակերտ – աշակերտ մակարդակում ունենում են դրական ազդեցություն ուսուցման մակարդակի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, -Եր.:Մանկավարժ, 2005, -454 էջ: [292-302]
2. Թովուզյան Ա.Օ. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Եր.:Լինգվա, 2009, 297 էջ:
3. Վարդումյան Ս. Տ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քաաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, -Եր.:<Նոյյան տապան>, 2005, -405 էջ:
4. *Кукушин В.С., Болдырева-Вараксина А.В.* _ “ Педагогика начального образования” М.: 2005. – 295-296с.
5. Столяренко Л.Д., Основы психологии, Ростов-на-Дону1997,стр.408,410,412

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՄԵԼԱՆՅԱ ՀԱԿՈՐԲԱՆ

Առարկա	Մաթեմատիկա	Ամսաթիվ	21. 04.202 2	Կիսամյակ	2-րդ	Դասարան	3-րդ
Թեմա՝ Բազմանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվով							
Օգտագործվող նյութեր՝ գրատախտակ, դասագիրք, տետր							
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> ✦ բացատրել թե ի՞նչ է բազմանիշ թիվը, խոսել գրության մասին ✦ Կրթական՝ վերհիշել բազմապատկման աղյուսակը ✦ զարգացնել արագ մտածել և պատասխանել ✦ Ջարգացնող՝ սյունակաձև բազմապատկելու հմտություն ✦ ձևավորել հաշվարկներ կատարելու նոր հմտություն ✦ Դաստիարակչական՝ խաղերի միջոցով ստուգել նրանց համբերությունը, միմյանց օգնելու կարողությունը, 						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	<ul style="list-style-type: none"> ✦ Սովորողները կվերհիշեն բազմապատկման աղյուսակը ✦ Կարողանան գրել և բացատրել բազմանիշ թվերով գործողությունների կարգը ✦ Կտիրապետեն հաշվարկ անելու նոր ձևի ✦ Կպատասխանեն թեմային վերաբերող հարցերին ✦ Կգիտակցի դասի բովանդակությունը 						
Գործողություններ (ժամ-տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			
7 րոպե	Կազմակերպչական մաս՝ ներկա- բացակա -2ր. Դասի խթանում՝ մտազրոհ մեթոդով բացատրել ի՞նչ է տարիքային տարբերությունը, 5 րոպե				Մտազրոհ Կշռադասում		

20 րոպե	<p>Սովորողները լսում են դասը, մասնակցում ընթացքում ուսուցչի միջամտությամբ</p>	<p>Դասի իմաստի ընկալում - ուսուցիչը բացատրում նոր դասը, սովորողների մոտ նոր նյութի վրա ուշադրության կենտրոնացման համար տալիս է դասի վերաբերյալ հարցեր, նրանց մասնակիցը դարձնում նոր նյութի բացատրմանը</p>		Պոպ- կոռնի մեթոդի կիրառում
5րոպե			Բազմանիշ թվերով գործողություններ, պարզից բարդ	T -ձև մեթոդ
5 րոպե		Կշռադատում- ամփոփում Տնային աշխատանքի հանձնարարում		
5 րոպե		Գնահատում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում գործող միավորային ձևով		

Հավելված 2 ԴԱՍԱՊԼԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մելանյա Հակոբյան

Առարկա	Մաթեմատիկա	Ամսաթիվ	23. 04.2022	Կիսամյակ	2-րդ	Դասարան	3-րդ
Թեմա՝ «Մակերես»							
Օգտագործվող նյութեր՝ գրատախտակ, դասագիրք, տետր, երկրաչափական պատկերներ							
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> ✦ բացատրել թե ի՞նչ է մակերեսը, ✦ զարգացնել երկրաչափական պատկերների մասին գիտելիքները 						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	<ul style="list-style-type: none"> ✦ Սովորողները կկարողանան հաշվել տարբեր երկրաչափական պատկերների մակերեսը ✦ Կտարբերակեն պարագիծը մակերեսից ✦ Կպատասխանեն դասին վերաբերող հարցերին 						
Գործողություններ (ժամ-տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ		Կիրառվող մեթոդներ		
7 րոպե	Կազմակերպչական մաս՝ Ներկա բացակա2ր. , դասատեյ անկի պարաստում խմբայ ին սշխասունքի հանկո, դասի իթանուււմ՝ մտագրոի մեթոդով – 5ր.				ՄՏԱԳՐՈՂ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿՇՈՒՄԱՍՏՈՒՄ		
20 րոպե	Սովորողները լսում են ուսուցչի հանձնարարությունը և կատարում խմբերով,	Դասի իմաստի ընկալում – նախքան դասի բացատրելը բաժանվում են քարտեր, որոնք կապված են նախորդ դասի հետ, սովորողները պետք է կատարեն իրենց տրված հանձնարարությունը:					
5րոպե			Թվաբանական		23		

			գործողություններ	
5 րոպե		Կշռադատում- Տնային հանձնարարում ամփոփում աշխատանքի		
5 րոպե		Գնահատում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում գործող միավորային ձևով		